

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ՇԱՆԹ ԳԻՆԳԻՆԵԱՆԻ ՀԵՏ

Posted on May 23, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Համո Մոսկոֆեան, Պեյրուբ 23 Մայիս 2011



Հարցազրույց

ՀԱՐՑՈՒՄ.- Պարոն Չինչինյան, վերջերս Լիբանանի խորհրդարանական պատվիրակությամբ այցելեցիք Ա.Ս.Ն.: Կարո՞ղ էք ասել թե ինչպիսի՞ առաքելություն էր այդ, որո՞նք էին Ձեր նպատակները և հանդիպումները Ամերիկայում:

Համո Մոսկոֆեան, Պեյրուբ 23 Մայիս 2011



Հարցազրույց

ՀԱՐՑՈՒՄ.- Պարոն Չինչինյան, վերջերս Լիբանանի խորհրդարանական պատվիրակությամբ այցելեցիք Ա.Ս.Ն.: Կարո՞ղ էք ասել թե ինչպիսի՞ առաքելություն էր այդ, որո՞նք էին Ձեր նպատակները և հանդիպումները Ամերիկայում:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Լիբանանի խորհրդարանի հինգ անդամ երեսփոխանների պատվիրակությամբ այցելեցինք Վաշինգտոն, ուր “Կապիտալ Հիլ”-ում տեղի ունեցավ սեմինար-խորհրդածողով բարելավելու խորհրդարանական դեմոկրատական հանձնաժողովների աշխատանքը, ծանոթանալով ամերիկյան կառույցներին՝ նույն բնագավառում: Լիբանանի կողքին մասնակցում էին Փակիստանի, Ինդոնեզիայի և Իրաքի խորհրդարանականները: Մի շաբաթ շարունակ, կոնգրեսմեններ մեզ ներկայացրեցին ժողովրդավարական կառավարման իրենց փորձը, միաժամանակ հանդիպեցինք Վաշինգտոնում Լիբանանի դեսպանի և լիբանանյան կուսակցությունների ներկայացուցիչներին՝ որոնք աշխատանքներ են տանում Վաշտինգտոնում: Մենք, չորս քույր երկրների խորհրդարանականներս, եզրափակիչ ելույթ ունեցանք մեր իջեվանած հյուրանոցում:

Այա, անձնական-ընտանեկան պատճառներով այցելեցի Լոս Անջելոս և Նյու Յորկ, ուր ազգականներ ունեմ: Այնտեղ՝ Լոս Անջելոսի Մարաշի Հայրենակցական Միության դահլիճում կազմակերպվել էր հանդիպում Ռամկավար-Ազատական, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցության, «Լիբանանյան Ուժեր»-ի և «Մուսթաքբալ» քաղաքական շարժման ղեկավարների ու համակիրների հետ: Բոլորը շատ հետաքրքրված էին Լիբանանի իրավիճակով և շատ հարցեր տվեցին հանդիպման ընթացքում, նաև թե ինչպե՞ս կարող էին օգտակար դառնալ Սփյուռքին: Բազմաթիվ հարցեր տրվեցին Լիբանանի քվեարկության օրենքի մասին, որն տակավին չէր վավերացվեր արտաքին գործերի նախարարության կողմից:



Լոս Անջելոսում հանդիպեցինք նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թեմի Առաջնորդ՝ Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյանին՝ նորակառույց տաճառում: Նյու Յորկում ևս հանդիպում ունեցանք Սուրբ Վարդան եկեղեցի և Առաջնորդարան, ուր հորեղբայրս երկար տարիներ պաշտոնավարել է: Այցելեցինք նաև լիբանանյան եկեղեցիներ ինչպես Նյու Յորկում, այնպես էլ Նյու Ջերսիում, ինչպես մարոնիթների «Սեյիտեթ ալ-Լուբնան»

(Լիբանանի Տիրուհի) եկեղեցին:

✘ ՀԱՐՑՈՒՄ.- Վերջերս, Լիբանանում, ինչպես աշխարհատարած Սփյուռքում և հայրենիքում մեծ շուքով ոգեկոչվեց Հայոց Ցեղասպանության 96-ամյակը: Ինչպե՞ս եք տեսնում ճանաչման և հարցի լուծման գործընթացը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Հայոց Ցեղասպանության ոգեկոչմանը նվիրված բոլոր այն միջոցառումներին որտեղ հրավիրվել էինք, մասնակցեցինք ինչպես հայ-կաթողիկե պատրիարքարանի, Հայ Ավետարանական եկեղեցվո ու Հայաստանի դեսպանատանը: Այս տարի բազմաթիվ վավերագրական ֆիլմեր էին պատրաստվել Լիբանանյան LBC և Tele Lumiere հեռուստակայանների կողմից՝ նվիրված Հայոց Ցեղասպանությանը: Մինչև 2015 թ., Ոգեկոչման 100-ամեակը, պետք է հայության միասնական ջանքերով մեծ պետությունների վրա ճնշում բանեցնել, միաժամանակ ծանոթացնելով օտարներին Ցեղասպանության պատմական փաստերին և հայոց արդար իրավունքի մասին: Պետք է վեր բարձրանանք անհատ խմբերով աշխատելաձևից, այլ միասնաբար պայքարենք մեր պահանջների իրականացման համար: Այս գործընթացին պետք է երիտասարդութունը զանգվածային կերպով մասնակցի Ցեղասպանությունը օտարներին ճանաչել տալու գործընթացին: Լինի դա խորհրդածողովներով, հանդիպումներով ևլն.:

ՀԱՐՑՈՒՄ.- Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը Մերձավոր Արևելքում և արաբական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Այն երկրներում, որտեղ գոյություն է ունեցել խորհրդարանական, դեմոկրատական հասարակարգ, կառավարություն և նախարարներ՝ պետք է հարգվեն օրենքները: Արաբ ժողովուրդը ամբողջ աշխարհին ցույց տվեց թե արթուն և իր իրավունքներին համար պայքարող ժողովուրդ է, նույնիսկ 20-30 տարի հետո: Այսինքն՝ փոփոխություններ կատարել իրենց երկրների կառավարման մեջ՝ նույնիսկ նախագահներ փոխելով: Այս առողջ գործընթաց է գաղափարապես: Շարժման կայծը սկսվեց Թունիսից, որտեղ մի երիտասարդ, բողոքի ինքնահրկիզում կատարեց բռնատիրության արգելքների դեմ...: Որոշ անձեր ասում են թե դրսից ինչ որ շրջանակներ “խառնում են” իրավիճակը: Ինչ որ էլ լինեն պատճառները, ապա և ժողովուրդը ցույց տվեց թե պատրաստ է հեղափոխել իր երկրի վարչակարգը:

Լիբանանում 2005 թ.-ին այդ հեղափոխությունը տեղի ունեցավ, թեև ոչ կատարյալ արդյունքներով, որովհետև երկիրը համայնքային կառույց ունի: Բավական չէ որ հեղափոխություն կատարվի բազմամիլիոնանոց Եգիպտոսում, ուր երևի երկար ժամանակ է պետք, որպեսզի ժողովուրդը կարողանա կազմակերպվել, իրագործելու անհրաժեշտ փոփոխությունները տասնամյակների բռնատիրական վարչակարգերից հետո: Մաղթենք որ ամեն ինչ ընթանա ոչ-վայրագ ձևով:

Գալով Լիբանանին՝ ապա և այստեղ այդ բիրտ ու վայրագ իրավիճակները չեն կարող

ստեղծվել և հայությունը կարող է հանգիստ լինել այդ հարցով, որովհետև Լիբանանում ամեն 6 տարին հանրապետության նախագահը փոխվում է, կազմակերպվում են խորհրդարանական ազատ ընտրություններ: Սակայն ժողովուրդը պետք չէ դադարի իր իրավունքները պահանջել, ինչպես կենցաղային, այնպես էլ ժողովրդավարական թե ազգային հարցերով. խորհրդարանի երեսփոխանը չի կարող կարգավորել բոլոր հարցերն ու պահանջները: Պետք է կազմակերպված ձևով կատարվեն բոլոր բարեփոխումները, հասնելով ցանկալի նպատակներին:

